ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ՄԻՋԿՐՈՆԱԿԱՆ 13-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԲՈՒԽԱՐԵՍՏՈՒՄ

Օգոստոսի 30-ից սեպտեմբերի 1-ը Բուխարեստում տեղի ունեցավ Սբ. Էջիդիո համայնքի ամենամյա միջազգային-միջկրոնական «Մարդիկ և կրոններ» հանդիպումը՝ «Խաղաղությունը Աստծո անունն է» նշանաբանով:

Առաջին անգամը լինելով Օրթոդոքս երկրում, 13-րդ այս հավաքը տեղի էր ունենում Ռումինիայի նախագահ Էմիլ Կոստանտինեսկուի և Ռումին Օրթոդոքս Եկեղեցու առաջնորդ Թեոկտիստ Պատրիարքի հրավերով և հովանավորությամբ:

Օգոստոսի 30-ին Ռումինիայի Պառլամենտի պալատի Միջազգային կոնֆերանսների կենտրոնում՝ Ալեքսանդրիայի հույն ուղղափառ Պատրիարք Պետրոս Է-ի նախագահությամբ տեղի ունեցավ համաժողովի պաշտոնական բացումը: Բացմանը ողջույնի խոսքով հանդես եկան Ռումինիայի նախագահը, Թեոկտիստ Պատրիարքը և Սբ. Էջիդիո համայնքի նախագահ պրոֆեսոր Անդրեա Ռիկկարդին:

Եռօրյա համաժողովի ընթացքում լսվեցին զանազան զեկուցումներ և տեղի ունեցան աջխույժ քննարկումներ՝ միջկրոնական և միջազգային հիմնահարցերին նվիրված կլոր սեղանների շուրջ:

Համաժողովն ավարտվեց սեպտեմբերի 1-ին, Բուխարեստի Համալսարանական հրապարակում՝ խաղաղության կոչի ստորագրությամբ՝ ուղղված բոլոր երկրների պետական, քաղաքական և եկեղեցական գործիչներին:

Համաժողովին ներկա էին Անտիոքի հույն ուղղափառ Պատրիարք Իգնատիոս Դ Հազիմը, Բուլղարիայի Պատրիարք Մաքսիմը, Եթովպիայի Պատրիարք Արունա Պաուլոսը, Կիպրոսի, Չեխիայի և Ֆինլանդիայի արքեպիսկոպոսները, ներկայացուցիչներ գրեթե բոլոր Ուղղափառ Եկեղեցիներից:

Կաթոլիկ Եկեղեցու պատվիրակությունը գլխավորում էին կարդինալներ Կասսիդին, Սիլվեստրինին, Էչեգարայը, Արինցեն Սթաֆֆորդը, Գլեմփը, դոս Սանթոսը: Ներկա էին նաև բողոքական Եկեղեցիների գրեթե բոլոր հարանվանությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի գլխավոր քարտուղար Քեյթ Կլեմենթսը: Հավաքին մասնակցում էին նաև բոլոր մեծ կրոնների /մահմեդականություն, հուդայիզմ, բուդդիզմ և այլն/ ներկայացուցիչներ՝ հրավիրված տարբեր մայրցամաքներից:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ևս իր լիարժեք ու ամբողջական մասնակցությունը բերեց համաժողովին: Հայ Եկեղեցու պատվիրակությունը գլխավորում էր Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը, որի նախագահությամբ ընթացան օգոստոսի 30-ի լիագումար նիստը, ինչպես նաև սեպտեմբերի 1-ի «Էկումենիկ շարժումը երրորդ հազարամյակում՝ ճգնաժամեր և հույսեր» թեմայով կլոր սեղանի աշխատանքները:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատվիրակության կազմում էին նաև Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արք. Մարտիկյանը, Վեհափառ Հայրապետի միջեկեղեցական հարցերի գծով օգնական Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը և Կիլիկիո Կաթողիկոսի գավազանակիր Մեղրիկ վրդ. Բարիքյանը:

Համաժողովի օրերին Հայ Եկեղեցու պատվիրակությունը, Ռումինիայում ՀՀ հավատարմատար տիկ. Ղազինյանի ընկերակցությամբ, այցելեց Ռումինիայի նախագահ պարոն Կոստանդինեսկուին՝ վերջինիս անմիջական փափագով: Հանդիպման ընթացքում երկուստեք շոշափվեցին Հայաստան-Ռումինիա փոխհարաբերություններում Հայ Եկեղեցու մասնակցությանը, ինչպես նաև ռումինահայ համայնքին վերաբերող հարցեր: Պրն. Կոստանտինեսկուն խիստ դրական արտահայտվեց վերջերս Հայաստան կատարած իր այցելության մասին և կարևորեց իր ունեցած հանդիպումները ՀՀ նախագահի և կառավարության հետ:

Հայ Եկեղեցու պատվիրակությունը երկու հանդիպում ունեցավ նաև Ռումին Եկեղեցու Թեոկտիստ Պատրիարքի հետ: Մեծապես գնահատելով Հայ Եկեղեցու մասնակցությունը համաժողովին՝ Թեոկտիստ Պատրիարքն իր եղբայրական ողջույնները հղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Մ. Ծ. Վ. Ա.